ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«01.02. 2018թ». N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/4-5-18 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան « » 2018թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«Ռեաքիմ» ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Մ.Թագեսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր և հիմք ընդունելով **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության** և **«Ռեաքիմ» ՍՊԸ**-ի միջև **01.02.2018թ**. կնքված թիվ **ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/4-5-18** ծածկագրով պետական գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը որոշեցին լուծել պայմանագրի 6-րդ չափաբաժինը փոխադարձ համաձայնությամբ :

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 01.**02.2018թ**. կնքված թիվ **ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/4-5-18** Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքված են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Ռեաքիմ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
հ/հ՝ 900013010013,900011004711, 900011018695 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02505983	հ/հ՝157002580031010 0 .
	ՀՎՀՀ՝ 01239302
Ա.Կարապետյան	Մ.Թագեսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ 18/4-5-18

ք. Երևան «01» «02» 2018թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և **«Ռեաքիմ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Մ.Թագեսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված **տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձեռնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **166020/** մեկ հարյուր վաթսունվեց հազար քսան/ **առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գինը կազմում է 69345** /վաթսունինը հազար երեք հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2), իսկ **(հավելված N 2.1-ը կսահմանվի սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվող համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում)** նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1 N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն (հավելված 1.1) իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Ռեաքիմ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
ՀՎՀՀ՝ 900013010013,900011004711, 900011018695 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
	ՀՀ1570025800310100 ,
ՀԿՀՀ՝ 02505983	ՀԿՀՀ՝ 01239302
Ա.Կարապետյան	Մ.Թագեսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«01» 02
ՀՀ ՏՀՆՆ ԳՀԱՊՁԲ-18/4 - 5 -18

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

«» դրամ

Ապրանքի												
նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտա-դրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/«» դրամ	ընդհանուր գինը/«» դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**	
2	39831276 Նախարարության աշխատակազմ	զուգարանների մաքրման նյութեր Sinus	Հայաստան Քիմ ֆոամ ՍՊԸ	Կոնցենտրացված սպիտակեցնող միջոց:	լիտր	495	24750	50	Մ.Մկրտչյան 5	50		
	39831276 Նախարարության աշխատակազմի շտկայի վերահսկողության տեսչական մարմին						2475	5		5		
3	39831280 Նախարարության աշխատակազմ	ապակի մաքրման միջոց РАДУГА	Հայաստան Քիմ ֆոամ ՍՊԸ	Լվացման միջոցներ ապակիները մաքրելու համար, չափածրարված 0,5 մլ զանգվածով:	Լիտր	270	4050	15	Մ.Մկրտչյան 5	15		
							1620	6		6		

	39831280 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին										
4	39831245 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	օճառ, հեղուկ ELVI	Բուլղարիա Բուլեկո 2000 ՍՊԸ	Հեղուկ օճառ, 400մլ տարայով, մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների» տեխնիկական կանոնակարգի:	հատ	500	2500	5	Մ.Մկրտչյան 5	5
5	39812410 Նախարարության աշխատակազմ	կահույքի փայլեցման միջոց POLO	Թուրքիա «POLO» Ապրանքանիշի արտադրություն	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով, 500մլ:	հատ	500	4000	8	Մ.Մկրտչյան 5	8
	39812410 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին						3000	6		6
7	39831283 Նախարարության աշխատակազմ	հատակի լվացման լաթ	Թուրքիա	Հատակի մաքրման շոր, բամբակյա գործվածքից, չափը՝ 80x100 սմ:	հատ	400	19200	48	Մ.Մկրտչյան 5	48
							2800	7		7

	39831283 Նախարարության աշխատակազմի շրջակայի վերահսկողության տեսչական մարմին										
8	39811300 Նախարարության աշխատակազմի շրջակայի վերահսկողության տեսչական մարմին	հոտազերծիչ, օդի Gold	Ռուսաստան «СИБИАР» ՍՊԸ	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, 10FL OZ/300մլ, թարմ ծաղկային բուրմունքով, բարձր որակի:	հատ	495	4950	10	Մ.Մկրտչյան 5	10	
ԸՆԴԱՄԵՆԸ Նախարարության աշխատակազմ 900011018695					-	-	52000	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ Նախարարության աշխատակազմի շրջակայի վերահսկողության տեսչական մարմին 900011004711					-	-	17345	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ					-	-	**69345**	-	-	-	-

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա 2,3,5,7 չափաբաժիններով (Նախարարության աշխատակազմ) և 2,4,7 (նախարարության աշխատակազմի շրջակայի վերահսկողության տեսչական մարմին) մարտի 30-ը, իսկ 3,5,8 չափաբաժիններով (նախարարության աշխատակազմի շրջակայի վերահսկողության տեսչական մարմին) հունիսի 29-ը:*

Գ Ն Ո Ր Դ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՎՀՀ՝ 900013010013,900011004711, 900011018695 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983
Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ
«Ռեաքիմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570025800310100 ,
ՀՎՀՀ՝ 01239302
Մ.Թագեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ ՏԶՆՆ ԳՀԱՊՁԲ-18/4-5-18 «06» 02

Հավելված N 1.1
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	39831276 Նախարարության աշխատակազմ	զուգարանների մաքրման նյութեր Sinus	Հայաստան Քլիմ ֆոամ ՍՊԸ	Կոնցենտրացված սպիտակեցնող միջոց:	լիտր	495	14850	30	Մ.Մկրտչյան 5	30	
	39831276 Մտավոր սեփականության գործակալություն						7425	15	Կառավարական տուն 3	15	
3	39831280 Նախարարության աշխատակազմ	ապակի մաքրման միջոց	Հայաստան Քլիմ ֆոամ	Լվացման միջոցներ ապակիները մաքրելու համար, չափածրարված 0,5 մլ զանգվածով:	լիտր	270	2700	10	Մ.Մկրտչյան 5	10	

	39831280 Մտավոր սեփականության գործակալություն	РАДУГА	ՍՊԸ				4050	15	Կառավարական տուն 3	15	
4	39831245 Մտավոր սեփականության գործակալություն	օճառ, հեղուկ ELVI	Բուլղարիա Բուկեկո 2000 ՍՊԸ	Հեղուկ օճառ, 400մլ տարայով, մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների» տեխնիկական կանոնակարգի:	հատ	500	35000	70	Կառավարական տուն 3	70	
6	39836000 Մտավոր սեփականության գործակալություն	ավել սովորական	Հայաստան	Սենյակի հատակը մաքրելու համար, բարձր որակի, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ:	հատ	750	6750	9	Կառա-վարական տուն 3	9	
7	39831283 Նախարարության աշխատակազմ	հատակի լվացման լաթ	Թուրքիա	Հատակի մաքրման շոր, բամբակյա գործվածքից, չափը՝ 80x100 սմ:	հատ	400	8000	20	Մ.Մկրտ-չյան 5	20	
	39831283 Մտավոր սեփականության գործակալություն						8000	20	Կառա-վարական տուն 3	20	
8	39811300 Մտավոր	հոտազերծիչ,	Ռուսաստան «СИБИАР»	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակուումային բալոնիկով,	հատ	495	9900	20	Կառա-վարական	20	

	սեփականության գործակալություն	օդի Gold	ՍՊԸ	10FL OZ/300մլ. թարմ ծաղկային բուրմունքով, բարձր որակի:					տուն 3		
ԸՆԴԱՄԵՆԸ /900013010013/					-	-	96675	-	-	-	-

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*****Մատակարարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված գնման ժամանակացույցով: Սույն հավելվածով ձեռքբերվող ապրանքների ֆինանսավորման աղբյուրն է՝ արտաբյուջե:***

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5

ՀՀ՝ 900013010013,900011004711,

900011018695

ՀՀ ՖՆ աշխատակազմի

գործառնական վարչություն

ՀՎՀՀ՝ 02505988

_____Ա.Կարապետյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Ռեաքիմ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

ՀՀ՝1570025800310100 ,

ՀՎՀՀ՝ 01239302

_____Մ.Թագեսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«01» 02
ՀՀ ՏՀՂՆ ԳՀԱՊՁԲ 18/4 -518

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափաբաժնի համ.	գնումների պլանով նախ.միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դաս. (CPV)	Տեսակ դաս	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* / ՀՀ պետական բյուջե/													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	39831276 Նախարարության աշխատակազմ	4267	զուգարանների մաքրման նյութեր	-	-	-	24750	24750	24750	24750	24750	24750	24750	24750	24750	24750
	39831276 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին			-	-	-	2475	2475	2475	2475	2475	2475	2475	2475	2475	2475
3	39831280 Նախարարության աշխատակազմ	4267	ապակի մաքրման միջոց	-	-	-	4050	4050	4050	4050	4050	4050	4050	4050	4050	4050
	39831280 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին			-	-	-	-	-	1620	1620	1620	1620	1620	1620	1620	1620
4	39831245 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4267	օճառ, հեղուկ	-	-	-	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
5	39812410 Նախարարության աշխատակազմ	4267	կահույքի փայլեցման միջոց	-	-	-	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
	39812410															

	Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին			-	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
7	39831283 Նախարարության աշխատակազմ	4267	հատակի լվացման լաթ	-	-	-	19200	19200	19200	19200	19200	19200	19200	19200	19200	19200
	39831283 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին			-	-	-	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800
8	39811300 Նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության տեսչական մարմին	4267	հոտազերծիչ, օդի	-	-	-	-	-	4950	4950	4950	4950	4950	4950	4950	4950
ԸՆԴԱՄԵՆԸ				**-**	**-**	**-**	**59775**	**59775**	**69345**	**69345**	**69345**	**69345**	**69345**	**69345**	**69345**	**69345**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՎՀՀ՝ 900013010013,900011004711,
900011018695 ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական գանձարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Ռեաքիմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀ՝157002580031010 0 ,
ՀՎՀՀ՝ 01239302

Մ.Թագեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2.1
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«01» 02
ՀՀ ՏՀԶՆ ԳՀԱՊՁԲ-18/4 - 5 - 18

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափ. համարը	գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դաս. (CPV)	Տնտես դաս	անվանումը	Ապրանքի												
2	39831276	4267	զուգարանների մաքրման նյութեր													
3	39831280	4267	ապակի մաքրման միջոց													
4	39831245	4267	օճառ, հեղուկ													
6	39836000	4267	ավել սովորական													
7	39831283	4267	հատակի լվացման լաթ													
8	39811300	4267	հոտազերծիչ, օդի													
ԸՆԴԱՄԵՆԸ																

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՀ՝ 900013010013,900011004711,
900011018695 ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Ռեաքիմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝1570025800310100 ,
ՀՎՀՀ՝ 01239302

Մ.Թագեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«01» 02
ՀՀ ՏԶՆՆ ԳՀԱՊՁԲ- 18/4-5-18

Պայմանագիր կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ունենալով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«01» 02
ՀՀ ՏՀՇՆ ԳՀԱՊՁԲ-18/4- 5-18

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն